

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
մարտի 27-ի N 342-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԵՂԻ ԳՈՎԱԳՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում դեղի գովազդի թույլտվության նպատակով գովազդային նյութի փորձաքննության իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Դեղի գովազդային նյութի փորձաքննությունն (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն):

3. Փորձաքննության համար գովազդատուն դիմում է կազմակերպությանը՝ ներկայացնելով սույն որոշման N 1 հավելվածի 6-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը և նյութերը էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով:

4. Փորձաքննությունը սկսվում է գովազդային նյութի փորձաքննության համար սահմանված պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

5. Փորձաքննության ընթացքում կարող են պահանջվել բացակայող փաստաթղթեր կամ տվյալների փոփոխություն, որոնք ներկայացնելու ժամանակահատվածը չի ներառվում սույն կարգի 9-րդ կետով սահմանված ժամկետում:

6. Փորձաքննության ընթացքում բացակայող փաստաթղթերի կամ տվյալների փոփոխությունների ներկայացման անհրաժեշտության մասին պատշաճ կարգով տեղեկացվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դրանք չներկայացնելու դեպքում փորձաքննությունը դադարեցվում է, և կազմվում է փորձագիտական եզրակացություն՝ դիմումը մերժելու վերաբերյալ:

7. Ներկայացված փաստաթղթերը, նյութերը և պետական տուրքը չեն վերադարձվում՝ անկախ փորձաքննության արդյունքից:

8. Փորձաքննության ժամանակ գնահատվում է գովազդային նյութի համապատասխանությունը «Դեղերի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին», «Հանրային առողջապահության մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապատվաստելու մասին», «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին», «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքներով կամ դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

9. Դիմումը ստանալուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվում և դիմողին է տրամադրվում փորձաքննության եզրակացություն՝ «Դեղերի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին», «Հանրային առողջապահության մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապատվաստելու մասին», «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին», «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքներով կամ դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին գովազդային նյութի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ՝ էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ